

© Association of Judges of the RA,
http://www.judge.am/index.php?option=com_content&view=category&layout=blog&id=36&Itemid=60&lang=en. [Translation already published in Collection of judgments of ECHR in Volume 8, 2013.] Permission to re-publish this translation has been granted for the sole purpose of its inclusion in the Court's database HUDOC.

CASE OF MALKOV v. ESTONIA - Armenian Translation] by the Association of Judges of the RA

ՄԱԼԿՈՎՆ ԸՆԴԴԵՄ ԷՍՏՈՆԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ

2010թ. մայիսի 4-ի վճիռը

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

ՓԱՍՏԵՐ

I. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Դիմողը ծնվել է 1979 թվականին: Այժմ նա կրում է իր պատիժը բանտում:

A. Մինչդատական վարույթ

5. 1998թ. օգոստոսի 6-ին սկսվել է տաքսու վարորդի սպանության վերաբերյալ քննությունը, որի դին հայտնաբերվել էր մեկ շաբաթ առաջ՝ անտառում: Նրա մեքենան հրկիզված էր:

6. 1999թ. հունվարի 28-ին քննությունը կասեցվել է հանցագործի ինքնությունը չպարզելու հետևանքով:

7. 1999թ. օգոստոսի 10-ին քննությունը վերսկսվել է, և որում որպես կասկածյալ հանդես է եկել Կ.-ն: Հաջորդ օրը դիմողը հարցաքննվել է որպես վկա: Նա ասել է, որ ինքը 1998թ. մայիսին չի օգտվել տաքսու ծառայություններից Տալլինից մինչև Սիլամայե հասնելու համար և չի վաճառել բջջային հեռախոս Ֆ.-ին, և որ նա Տալլինի տաքսու վարորդի սպանության մասին ոչինչ չի լսել: Հարցաքննությունը տևել է տասը րոպե:

8. 1999թ. օգոստոսի 16-ին քննությունը կրկին դադարեցվել է:

9. 2001թ. ապրիլի 19-ին կարգադրվել է կրկին վերսկսել քննությունը:

10. 2001թ. ապրիլի 19-ին Տալլինի վարչական դատարանի նախագահը (halduskohus) թույլատրել է լսող գաղտնի սարքավորումների տեղադրումը Թ.-ի տանը՝ խոսակցությունները ձայնագրելու նպատակով: Թույլտվությունը տրված էր տասնօրյա ժամկետով և ուժի մեջ էր մինչև 2001թ. մայիսի 18-ը: Ըստ հետախուզական գործունեության վերաբերյալ զեկույցի՝ 2001թ. մայիսի 11-ին դիմողը և Թ.-ն խոսել են տաքսու վարորդի սպանության մասին:

11. 2001թ. հուլիսի 30-ին ոստիկանության քննիչը կազմել է արձանագրություն, ըստ որի՝ հանցագործությունը, որն սկզբում որակվել է որպես մարդասպանություն, հետագայում վերաորակվել է որպես սպանություն: Կ.-ն և դիմողը հանդիսանում էին կասկածյալներ: Քննիչի կարգադրությամբ նրանք պետք է ոստիկանության բաժանմունք տարվեին հաջորդ օրը:

12. 2001թ. օգոստոսի 1-ին քննիչի պահանջով դիմողը և Կ.-ն պետք է կալանավորվեին երկրից հեռանալու փորձ կատարելու դեպքում:

13. 2001թ. օգոստոսի 17-ին ոստիկանությունը փորձել է կալանավորել դիմողին, ով այդ ժամանակ տանը չէր: Նրա հարևանը չէր տեսել նրան մեկ շաբաթ:

14. Նույն օրը քննիչը մեղադրանք է ներկայացրել դիմողի դեմ: Նրան և Կ.-ին մեղադրանք է ներկայացվել սպանություն, կողոպուտ և սեփականության ոչնչացում կատարելու համար: Ըստ մեղադրանքների՝ հանցագործությունները կատարվել են 1998թ. մայիսի 17-ի գիշերը: Քանի որ դիմողը խուսափում էր քրեական պատասխանատվությունից, նա գտնվում էր փախուստի մեջ և քննությունը կասեցվել էր:

15. Իդա Վիրուի (Ida-Viru) շրջանային դատարանը (maakohus) 2001թ. օգոստոսի 17-ին քննիչի խնդրանքով թույլատրել է դիմողի տասնօրյա կալանքը նրա ձերբակալությունից հետո:

16. 2001թ. հոկտեմբերի 5-ին Թ.-ի նկատմամբ սկսվել է քրեական հետապնդում, ով մեղադրվում էր տաքսու վարորդի սպանության վերաբերյալ տեղեկատվություն չհայտնելու մեջ:

17. 2003թ. դեկտեմբերի 1-ին դիմողը ձերբակալվել է:

18. 2003թ. դեկտեմբերի 2-ին նրան ներկայացվել են 2001թ. օգոստոսի 17-ին կազմված մեղադրանքները:

19. 2003թ. դեկտեմբերի 4-ին Նարվայի քաղաքային դատարանը (linnakohus) թույլատրել է նրան կալանավորել մեկ ամսով: Հետագայում դատարանը պարբերաբար երկարաձգել է նրա կալանքը (2003թ. դեկտեմբերի 31-ին և 2004թ. հունվարի 29-ին, մարտի 26-ին, մայիսի 27-ին, հուլիսի 23-ին և օգոստոսի 26-ին):

20. Միևնույն ժամանակ, 2004թ. հուլիսի 23-ին Թ.-ի կողմից հանցանքի մասին տեղեկատվություն չհայտնելու վերաբերյալ քրեական գործը կցվել է այն գործին, որում դիմողը և Կ.-ն հանդես են գալիս որպես մեղադրյալներ:

Բ. Դատական քննությունը

21. 2004թ. սեպտեմբերի 21-ին կազմվել է մեղադրական եզրակացություն և քրեական գործն ուղարկվել է Նարվայի քաղաքային դատարան:

22. 2005թ. փետրվարի 1-ի որոշմամբ Քաղաքային դատարանին է հանձնվել դիմողի գործը՝ Կ.-ի և Տ.-ի հետ մեկտեղ: Դիմողը և Կ.-ն մեղադրվում էին սպանության և սեփականության ոչնչացման, իսկ Թ.-ն՝ հանցանքի վերաբերյալ տեղեկատվություն չտրամադրելու մեջ: Քաղաքային դատարանը հաստատել է մեղադրյալների նկատմամբ նախկինում կիրառված կանխարգելիչ միջոցները, այն է՝ երկարաձգել է դիմողի կալանքը և Կ.-ի՝ բնակության վայրից չհեռանալու վերաբերյալ նախազգուշացումը: Թ.-ի նկատմամբ որևէ խափանման միջոց չի կիրառվել, քանի որ նա այդ ժամանակ կրում էր տասը տարվա ազատազրկման իր պատիժը:

23. Նարվայի և Վիրուի քաղաքային դատարաններում, որոնք քննում էին տվյալ գործը դատական համակարգի վերակազմակերպումից հետո, լսումները նշանակվել էին հինգ օրով՝ 2005 և 2006թթ. ընթացքում: Վարույթի այդ տասը օրերին կայանալիք դատական նիստերը հետաձգվել են հինգ անգամ, հիմնականում դատավորի հիվանդության և վկաների՝ դատարանում ներկա չգտնվելու պատճառով: 2006թ. զարմանը գործը քննող դատավորը մահացել է: Դատավարությունը վերսկսել է մեկ այլ դատավոր: 2006թ. հոկտեմբերի 18-ին նախագահող դատավորը հրաժարվել է անցկացնել լսումները, քանի որ նա կարգադրել էր դիմողին կալանավորել վարույթի ավելի վաղ փուլում: Նույն օրը մեկ այլ դատավոր կրկին հրաժարվել է միևնույն պատճառով: Այնուհետև գործը քննելու համար նշանակվել է չորրորդ դատավորը, որը իրականացրել է վարույթը մինչև վերջ:

24. 2007 և 2008 թվականներին դատական լսումները նշանակվել էին տասնմեկ օրվա համար: Ի դեպ, լսումներն անցկացվել են հինգ օրերի ընթացքում և մնացած

վեց օրերին հետաձգվել են դատավորի, դատախազի և փաստաբանի հիվանդության և երեք անգամ՝ վկաների ներկա չգտնվելու պատճառներով:

25. 2005թ. ապրիլի 29-ին, 2006թ. մայիսի 31-ին, 2007թ. օգոստոսի 16-ին, 2007թ. նոյեմբերի 27-ին և 2008թ. փետրվարի 6-ին Քաղաքային և Շրջանային դատարանները մերժել են դիմողի՝ իրեն ազատ արձակելու և կալանքի փոխարեն բնակության վայրից չհեռանալու վերաբերյալ ստորագրությունը որպես խափանման միջոց կիրառելու խնդրանքը: Դատարանները նշել են, որ դիմողը մեղադրվում է լուրջ հանցագործության մեջ, նա երկար ժամանակ թաքնվել է (2001թ. օգոստոսի 17-ից մինչև 2003թ. դեկտեմբերի 1-ը), որի ընթացքում նա քաջ գիտակցել է, որ ոստիկանությունը փնտրում է իրեն: Այնուամենայնիվ, նա մեկնել է Ռուսաստան և միայն վեց ամիս անց վերադարձել՝ անօրինականորեն հատելով սահմանը, քանի որ Ռուսաստանի Դաշնության վիզայի՝ իր ժամկետն անցել էր: Դատարանները նաև պարզել են, որ դիմողը չունեւր ազգակցական կապեր էստոնիայում, քանի որ նա քաղաքացիություն չունեցող, չամուսնացած և ընտանիք չունեցող անձ էր: Որոշվել էր, որ, դիմողի նկատմամբ կիրառված խիստ պատժի տեսանկյունից, առկա են հիմքեր ենթադրելու, որ նա կարող է կրկին փախչել: Դատարանները նաև գտել են, որ չի բացառվում, որ ազատության մեջ գտնվելու դեպքում դիմողը կարող է ճնշում գործադրել տուժողների և վկաների վրա:

26. 2008թ. սեպտեմբերի 4-ին Վիբուի շրջանային դատարանը կայացրել է իր վճիռը: Դիմողը՝ Կ.-ի հետ մեկտեղ, դատապարտվել է սպանության և սեփականության ոչնչացման մեղադրանքով: Նա դատապարտվել է ազատազրկման համապատասխանաբար՝ տասներեք և երեք տարի ժամկետներով, երկու հանցանքների համար ընդհանուր առմամբ վճռվել է տասներեք տարվա ազատազրկում: Կալանքի տակ մնալու ժամանակահատվածը համարվել է վճռի արդեն մարված ժամանակահատված: Դիմողի նկատմամբ կիրառվող կանխարգելիչ միջոցները մնացել են անփոփոխ՝ նա պետք է գտնվեր կալանքի տակ մինչև վճռի վերջնական դառնալը:

27. Նույն ամսաթվին Քաղաքային դատարանը որոշել է դադարեցնել քրեական վարույթը Թ.-ի նկատմամբ՝ պատժի անհամապատասխան լինելու պատճառով, քանի որ նա դատապարտվել է մեկ այլ քրեական գործով՝ տասը տարի ազատազրկման ժամկետով:

28. Դիմողը բողոքարկել է Քաղաքային դատարանի վճիռը՝ վկայակոչելով, *inter alia*, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված ողջամիտ ժամկետի պահանջի խախտումը: Նա նաև նշել է, որ ինքը եղել է կալանքի տակ գրեթե չորս տարի և տասն ամիս:

29. Տարտուի վերաքննիչ դատարանի (ringkonnakohtus) 2009թ. հունվարի 27-ի վճռով կարճվել է Քաղաքային դատարանի վճիռը՝ պատժի համապատասխան լինելու պատճառով: Վերաքննիչ դատարանը վկայակոչել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը և նշել, որ քրեական վարույթի ժամկետի ողջամիտ լինելը կամ չլինելը կախված է կոնկրետ գործի հանգամանքներից: Այն գտել է, որ ողջամիտ ժամկետում քրեական վարույթ չիրականացնելը պարտադիր կերպով չի ենթադրում տվյալ անձի արդարացումը և կախված հանգամանքներից՝ դրան կարող է հետևել քրեական վարույթի դադարեցումն անհամաչափության կամ վարույթի չհիմնավորված տևողության պատճառներով: Վերաքննիչ դատարանը գտել է, որ ներկայիս գործի քրեական վարույթը տևել է տասը տարի և վեց ամիս: Այն գտնում է, որ «պակաս կարևոր չէ» այն, որ դիմողը գտնվել է կալանքի տակ գրեթե հինգ տարի և երկու ամիս: Այն վճռել է, որ վարույթը չի կատարվել ողջամիտ ժամկետում: Հաշվի առնելով վերը նշվածը՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ նպատակահարմար է նվազեցնել դիմողի վճիռը: Նա դատապարտվել է ութ տարվա ազատազրկման՝ սպանության համար, և մեկ տարվա ազատազրկման՝ սեփականության ոչնչացման համար. վճիռն ընդհանուր առմամբ սահմանվում է ութ տարի:

30. 2009թ. ապրիլի 22-ին Գերագույն դատարանը (Riigikohus) հրաժարվել է քննել դիմողի բողոքը:

II. Համապատասխան օրենսդրություն և պրակտիկա

31. Քրեական դատավարության օրենսգրքի (Kriminaalmenetluse seadustik) 385-րդ հոդվածը նախատեսում է, որ նախնական կալանքի վերաբերյալ դատարանի հիմնավորված վճիռը ենթակա չէ առանձին դատավարական բողոքարկման: Օրենսգրքի 383-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նման վճիռը կարող է բողոքարկվել հիմնական վարույթի ընթացքում:

32. 2008թ. դեկտեմբերի 30-ի որոշմամբ (գործ թիվ 3-4-1-12-08) Գերագույն դատարանի սահմանադրական վերանայման պալատն իր վճիռը կայացրել է քրեական վարույթի ձգձգվածության մասին բողոքի վերաբերյալ: Այն մերժել է բողոքը՝ համարելով, որ դիմողն ունեցել է իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներից օգտվելու հնարավորություն: Գերագույն դատարանը վճռել է՝

«21. Պալատի կարծիքով, [դիմողի] ողջամիտ ժամկետում վարույթներն իրականացնելու իրավունքը խախտվել է և [դիմողն] իրավասու է ներկայացնել համապատասխան բողոք որպես Տարտուի քաղաքային դատարանում գտնվող վարույթի կողմ: Դատարանն ունի պարտավորություն նման բողոքը քննելու վարույթի ցանկացած փուլում, ոչ միայն վճիռը կայացնելուց հետո: Անհրաժեշտության դեպքում, դատարանը պետք է առաջնորդվի Կոնվենցիայով և պրակտիկայով, ինչը համապատասխանում է Քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ կետին՝ համարվելով քրեական դատավարության օրենքի աղբյուր: Կոնվենցիան Ռիգիկոգսի (Riigikogu) կողմից վավերացված միջազգային պայմանագիր է, որը համաձայն Սահմանադրության 123-րդ հոդվածի 2-րդ կետի՝ ունի գերակայություն էստոնիայի օրենքների կամ այլ իրավական ակտերի նկատմամբ (տե՛ս Գերագույն դատարանի *en banc* վճիռը, 2004թ. հունվարի 6-ի գործը, թիվ 3-1 - 3-13-03 - RT III-2004թ., 4, 36, կետ 31):

22. Համաձայն Սարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ վարույթի ոչ ողջամիտ երկարաձգումը պետք է գնահատվի դատարանի կողմից կոնկրետ գործի հանգամանքների լույսի ներքո, Դատարանում ամրագրված նախադեպի չափանիշներին համապատասխան, մասնավորապես, գործի բարդությունը, դիմողի և իրավասու մարմինների գործողությունները (տե՛ս, օրինակ, *Պելիսիեր և Սասին ընդդեմ Ֆրանսիայի [GC]*, no. 25444/94, կետ 67, ՄԻԵԴ 1999-II): Գերագույն դատարանը նաև նշել է, որ գնահատելիս, թե արդյոք ողջամիտ ժամկետը գերազանցվել է՝ դատարանը պետք է հաշվի առնի քրեական հանցանքի ծանրությունը, քրեական գործի բարդությունն ու ծավալը և այլ կոնկրետ հանգամանքներ, այդ թվում՝ վարույթի ընթացքը (տե՛ս Գերագույն դատարանի քրեական պալատի 2004թ. փետրվարի 27-ի վճիռը, թիվ 3-1-1-3-04 - RT III-2004, 8, 86, կետ 19):

23. Եթե դատարանը հանգում է այն եզրակացությանը, որ խախտվել է [դիմողի] ողջամիտ ժամկետում վարույթներն իրականացնելու իրավունքը, ապա դատարանը կարող է բոլոր հանգամանքների լույսի ներքո Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա դադարեցնել քրեական վարույթը որպես անհամապատասխան՝ վկայակոչելով արդարացնող վճիռը կամ այն փաստը, որ ողջամիտ ժամկետը գերազանցվել է:

Ինչ վերաբերում է նշված հնարավորություններին՝ Գերագույն դատարանի քրեական պալատը նշում է, որ քրեական վարույթի ողջամիտ ժամկետի երկարաձգումը պարտադիր չէ, որ հանգեցնի անձի արդարացմանը: Կախված հանգամանքներից՝ քրեական վարույթի ողջամիտ ժամկետն սպառվելու հետևանքը կարող է, օրինակ, լինել քրեական վարույթի դադարեցումը համապատասխան չլինելու պատճառով (տե՛ս Գերագույն դատարանի քրեական պալատի 2004թ. փետրվարի 27-ի վճիռը, թիվ 3-1-1-3-04 - RT III-2004թ., 8, 86,

կետ 22): Հաշվի առնելով վարույթի չհիմնավորված երկարաձգումը վճիռ կայացնելիս՝ քրեական պալատը նշում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա և Քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն դատարաններն իրավունք ունեն ավելի մեղմ պատժի ենթարկել, քան օրենքով նախատեսված նվազագույն ժամկետն (տես Գերագույն դատարանի քրեական պալատի 2008թ. նոյեմբերի 7-ի վճիռը, թիվ 3-1-1-28-08 - դեռևս չիրատարակված RT, III, կետ 17):

...

25. Հիմնարար իրավունքների խախտմամբ պայմանավորված՝ [դիմողի] վնասի փոխհատուցման պահանջը որոշելիս Պալատը համաձայնում է վարույթի մասնակիցների գրավոր կարծիքին, որ [դիմողը] կարող է պահանջել վնասի փոխհատուցում ցանկացած վարչական դատարանում՝ Պարտավորությունների մասին պետական ակտում սահմանված կարգի համաձայն»:

ՕՐԵՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

33. Դիմողը պնդել է, որ իր նախնական կալանքի տևողությունը չափազանց երկարաձգված էր և, հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում, որը սահմանում է՝

«Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալվել կամ կալանավորվել է սույն հոդվածի 1 (c) կետի դրույթներին համապատասխան... ունի ողջամիտ ժամկետում դատաքննության կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննությանը ներկայանալու երաշխիքներով»:

34. Կառավարությունը վիճարկել է այդ փաստարկը:

A. ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

1. Կողմերի փաստարկները

35. Կառավարությունը պնդել է, որ դիմողը չի սպառել ներպետական պաշտպանության միջոցները, քանի որ նա չի բողոքարկել Նարվայի քաղաքային դատարանի 2003թ. դեկտեմբերի 4-ի վճիռը, որով թույլատրվել էր նրա կալանքը կամ հետագա որոշումները, որոնցով դատարանը երկարաձգել էր նրա իր կալանքը: Կառավարությունը նաև նշել է, որ վերջին որոշումը, որով դիմողի կալանքը երկարաձգվել է (2004թ. օգոստոսի 26) կայացվել է ավելի քան վեց ամիս առաջ՝ նախքան դիմողի կողմից Դատարան գանգատ ներկայացնելը (2007թ. հուլիսի 11): Նրա կարծիքով, 5-րդ հոդվածի 3-րդ կետը կիրառելի չէ դատական վարույթի ընթացքում կալանքի տակ մնալու ժամանակահատվածի նկատմամբ, ավելին՝ դիմողն իր կալանքի երկարաձգման հարցը չի բարձրացրել 2008թ. սեպտեմբերի 4-ին Քաղաքային դատարանի որոշման դեմ ներկայացրած իր բողոքում, և ամեն դեպքում, դատական վարույթը դեռ ընթացքի մեջ էր, երբ Կառավարությունը ներկայացրել էր իր դիտարկումները:

36. Ընդհակառակը, Կառավարությունը պնդել է, որ դիմողը կորցրել է Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով զոհի կարգավիճակը 2009թ. հունվարի 27-ին Տարտուի վերաքննիչ դատարանի վճռից հետո, ըստ որի՝ դիմողի պատժաչափը կրճատվել է նրա կալանքի երկարաձգման և դատական վարույթի հետևանքով:

37. Դիմողն առարկել է՝ պնդելով, որ իր գանգատը չի վերաբերում մինչդատական քննության ընթացքում նախնական կալանքի տակ պահվելուն, այլ երկարաձգված դատական վարույթի ընթացքում նրա տևական կալանքին: Քաղաքային դատարանի վճռի դեմ ներկայացրած իր բողոքում դիմողը բարձրացրել է մինչդատական կալանքի և քրեական վարույթի երկարաձգման հարցը:

2. Դատարանի գնահատականը

38. Դատարանը կրկնում է, որ 35-րդ հոդվածի նպատակն է Պայմանավորվող պետություններին հնարավորություն տալ կանխելու կամ վերացնելու իրավունքի խախտումները՝ նախքան այդ բողոքները կներկայացվեն Կոնվենցիայի հաստատություններին (տե՛ս *Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի [GC]*, no. 25803/94, կետ 74, ՄԻԵԴ 1999-V): Այն նկատում է, որ դիմողը ձերբակալվել է 2003թ. դեկտեմբերի 1-ին և հետագայում Քաղաքային դատարանի թույլտվությամբ նա կալանքի տակ է առնվել, որը պարբերաբար երկարաձգվել է մինչև քրեական գործը 2004թ. սեպտեմբերին տեղափոխվել է Քաղաքային դատարան: Այդ ժամանակ դիմողը գտնվել է նախնական կալանքի տակ տասն ամսից պակաս: Նարվայի և Վիրուի քաղաքային դատարանների դատական վարույթների ընթացքում դիմողը բազմիցս պահանջել է, որպեսզի նրան ազատ արձակեն, սակայն այդ պահանջները մերժվել են (տե՛ս վերը՝ կետ 25): Որևէ դատավարական բողոք չի կարող ներկայացվել սույն որոշման դեմ: Դատարանը գտնում է, որ ներպետական իշխանությունները հնարավորություն են ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի ներքո պարզաբանելու դիմողի՝ իր իրավունքների խախտման վերաբերյալ պնդումները: Սույն գործի համատեքստում վճռորոշ նշանակություն չունի այն, թե արդյոք դիմողը բողոքարկել է նախնական որոշումը, որով թույլատրվել է նրա կալանքը, թե մինչդատական քննության ընթացքում իր կալանքը երկարաձգելու վերաբերյալ որոշումը: Ինչ վերաբերում է այն հարցին, որ դիմողը պետք է բարձրացներ այս հարցը Վերաքննիչ դատարանի առջև հիմնական վարույթում՝ Դատարանը նշում է, որ այն ժամանակ, երբ դիմողը իր գանգատը ներկայացրել է Դատարանին՝ նրա գործը դեռ ընթացքի մեջ էր առաջին ատյանի դատարանում և, հետևաբար, նման բողոքն այդ ժամանակ չի հանդիսացել դիմողի համար առկա միջոց: Հետևաբար, այս առարկությունը մերժվում է:

39. Ինչ վերաբերում է այն փաստարկին, որ դիմումը չափազանց ուշ է ներկայացվել, Դատարանը նշում է, որ դիմողը 2007թ. հուլիսի 11-ին՝ նրա դիմումը Դատարան ներկայացնելու պահին, եղել է նախնական կալանքի տակ: Հետևաբար, պահպանվել է վեցամսյա կանոնը, և այդ առարկությունը նույնպես մերժվում է:

40. Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք դիմողը կորցրել է իր՝ զոհի կարգավիճակը, ինչպես հայտարարել է Կառավարությունը, Դատարանը կրկնում է, որ պատժաչափի կրճատումը վարույթի չափազանց երկարաձգման հիման վրա՝ սկզբունքորեն չի զրկում անհատին զոհի կարգավիճակից Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով: Այնուամենայնիվ, այս ընդհանուր կանոնը ենթակա է բացառության, եթե ազգային իշխանությունները ընդունեն և թույլատրեն Կոնվենցիայի խախտման համար վնասի փոխհատուցումը (տե՛ս, *inter alia*, *Իքլն ընդդեմ Գերմանիայի*, 1982թ. հուլիսի 15, կետ 66, Series A no. 51, *Յանսենն ընդդեմ Գերմանիայի* (dec), no. 44186/98, 2000թ. հոկտեմբերի 12, և *Բեքն ընդդեմ Նորվեգիայի*, no. 26390/95, կետ 27, 2001թ. հունիսի 26): Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված ողջամիտ ժամկետի պահանջի խախտման վերաբերյալ գործերը քննելիս ազգային իշխանությունները կարող են թույլատրել համարժեք փոխհատուցում, մասնավորապես՝ նվազեցնել դիմողի պատժաչափը (տե՛ս, ի թիվս այլոց, *Կոչիարելլան ընդդեմ Իտալիայի [GC]*, no. 64886/01, կետ 77, ՄԻԵԴ 2006-V, *Սորվիստոն ընդդեմ Ֆինլանդիայի*, no. 19348/04, կետ 66, 2009թ. հունվարի 13, վերը նշված Բեքի գործը, և *Կալեչն ընդդեմ Գերմանիայի*, (dec.), no. 31890/06, 2009թ. հունիսի 23):

41. Ինչ վերաբերում է սույն գործին, Դատարանը նկատում է, որ վերաքննիչ դատարանն իր՝ 2009թ. հունվարի 27-ի վճռում մամրամասն անդրադարձել է քրեական վարույթի երկարաձգմանը, նաև հիմնվելով Գերագույն դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին: Թեև Վերաքննիչ դատարանը նշել է, որ դիմողի կալանքը տևել է գրեթե հինգ տարի և երկու ամիս, այն շարունակում է եզրակացնել, որ քրեական վարույթի տևողությունն ողջամիտ չէր: Ստացվում է, որ դիմողի կալանքի ժամկետի տևողությունը ամրապնդում է դատարանի փաստարկն առ այն, որ քրեական վարույթի

տևողությունն անհիմն է: Դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը դրանով հստակորեն չի ընդունում, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը խախտվել է և չի նվազեցրել դիմողի դատավճիռն այդ պատճառով:

42. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ դիմողը չի դադարել զոհ լինելուց Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով:

B. Արդյունքները

1. Ժամանակահատվածը, որը պետք է հաշվի առնվի

43. Այդ ժամանակահատվածը 5-րդ հոդվածի 3-րդ կետի ներքո պետք է հաշվարկվի 2003թ. դեկտեմբերի 1-ից, երբ դիմողը ձերբակալվել է: Դատարանը՝ հաշվի առնելով իր նախադեպային իրավունքը (տե՛ս, օրինակ, *Կուդլան ընդդեմ Լեհաստանի [GC]*, no. 30210/96, կետեր 104-105, ՄԻԵԴ 2000-XI), գտնում է, որ 5-րդ հոդվածի 3-րդ կետի նպատակներով այդ ժամանակահատվածն ավարտվում է 2008թ. սեպտեմբերի 4-ին, երբ Վիրուի շրջանային դատարանը դիմողի նկատմամբ մեղադրական վճիռ է կայացրել: Դիմողը, համապատասխանաբար, գտնվել է նախնական կալանքի տակ չորս տարի և ինն ամսից փոքր-ինչ ավելի:

2. Կալանքի տևողության ոչ ողջամտությունը

(a) Կողմերի փաստարկները

44. Դիմողը գտել է, որ հարուցված քրեական գործը բարդ չէ և նշում է, որ մինչդատական քննությունը, ընդհանուր առմամբ, ավարտվել էր նախքան դիմողին կալանավորելը:

45. Կառավարությունը պնդել է, որ դիմողի կալանքն արդարացված է այն փաստի տեսակետից, որ նա գտնվել է փախուստի մեջ ավելի քան երկու տարի: Հետևաբար, առկա էր կասկած առ այն, որ ազատության մեջ գտնվելու դեպքում նա կարող էր դիմել փախուստի: Բացի դրանից, դիմողը մեղադրվում էր շատ լուրջ հանցանք կատարելու մեջ, որի համար առավելագույն պատիժը ցմահ բանտարկությունն է: Այն նաև նշել է, որ դիմողը քաղաքացիություն չունեցող, չամուսնացած, ընտանիք, աշխատանք կամ մշտական եկամուտ չունեցող անձ է. այս գործոնները չեն կապում նրան էստոնիայի հետ, երկիր, որը նա լքել է Ռուսաստան գնալու համար, որտեղ նա թաքնվում էր: Ավելին՝ քրեական գործը եղել է բարդ:

(b) Դատարանի գնահատականը

46. Դատարանը կրկնում է, որ «ողջամիտ ժամկետում քննություն անցկացնելու կամ դրա անցկացման ընթացքում ազատ արձակելու» իրավունքի վերաբերյալ ընդհանուր սկզբունքները, ինչպես երաշխավորված է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով, հաստատվել են նախորդ մի շարք վճիռներում (տե՛ս, ի թիվս այլոց, վերը նշված Կուդլայի գործը, կետ 110 et seq., *Մակքեյն ընդդեմ Միացյալ Թագավորության [GC]*, no. 543/03, կետ 41 et seq., ՄԻԵԴ 2006-X և *Սուլառջան ընդդեմ Էստոնիայի*, no. 55939 / 00, կետեր 61-64, 2005թ. փետրվարի 15, հետագա հղումներով):

47. Դատարանը նկատում է, որ ներկայիս գործում իշխանությունները գլխավորապես հիմնվել են հիմնավոր կասկածի վրա՝ առ այն, որ դիմողը կատարել է լուրջ հանցագործություն, և որ նա կարող էր դիմել փախուստի, քանի որ նա երկար ժամանակ խուսափել է վարույթից նախքան իր ձերբակալումը: Դատարանները անդրադառնում են նաև ազատության մեջ գտնվելու դեպքում դիմողի կողմից վկաների վրա ճնշում գործադրելու հավանականությանը:

48. Դատարանն ընդունում է, որ կասկածն առ այն, որ դիմողը հանցանք է կատարել և այն, որ անհրաժեշտ է ապահովել վարույթի պատշաճ անցկացումը՝ արդարացնում են նրա կալանքը: Նրա կալանքը հետագայում արդարացվել էր երկրից հեռանալու և դատաքննությունից երկար ժամանակ խուսափելու փաստով:

Այսպիսով, Դատարանի կարծիքով դիմողի կալանքի հիմքերը, համեմայնդեպս, սկզբում «համապատասխան» և «բավարար» էին:

49. Այնուամենայնիվ, համաձայն Դատարանի նախադեպային իրավունքի՝ Դատարանը պետք է նաև բավարարվի նրանով, որ ազգային իշխանությունները «հատուկ ջանասիրություն» են ցուցաբերել դատաքննությունն անցկացնելիս: Քննության բարդությունն ու հատուկ հատկանիշներն այն գործոններն են, որոնք հաշվի են առնվել (տե՛ս, օրինակ՝ *Սքոթն ընդդեմ Իսպանիայի*, 1996թ. դեկտեմբերի 18, կետ 74, Վճիռների և որոշումների զեկույցներ, 1996-VI, և *Ի. Ա.-ն ընդդեմ Ֆրանսիայի*, 1998թ. սեպտեմբերի 23, կետ 102, Ձեկույցներ 1998-VII):

50. Ներկայիս գործում Դատարանը չի կարող համաձայնել Կառավարության այն փաստարկին, որ քրեական գործը բարդ է: Այն նկատում է, որ գործը վերաբերում է երկու ամբաստանյալների՝ Կ.-ի և դիմողի կողմից սպանություն և գույքի ոչնչացում կատարելուն: Բացի դրանից, Թ.-ն մեղադրվել է հանցանքի մասին հայտարարություն չտալու համար: Ըստ Քաղաքային դատարանի 2008թ. սեպտեմբերի 4-ի վճռի՝ դատարանը նախնական քննության ընթացքում լսել է ութ վկայի և տուժողին և հետազայում հիմնվել է երեք վկաների և տուժողի հայտարարությունների վրա: Դատարանի կողմից հետազոտված այլ ապացույցները (հիմնականում գրավոր), որոնք արտացոլված են Քաղաքային դատարանի վճռում, վերաբերել են դատարանի տեսակետին:

51. Դատարանը գտնում է, որ սույն գործով դատական վարույթի և դիմողի կալանքի տևողությունը հիմնականում պայմանավորված էին դատական լսումների բազմաթիվ ընդհատումներով, պաշտոնատար անձանց կողմից վկաների ներկայությունն ապահովելու դժվարությամբ և վարույթի մասնակիցների հիվանդությամբ: Ավելին, դատական վարույթը պետք է վերսկսվեր սկզբից՝ նախագահող դատավորի մահվան և հետազայում երկու դատավորների պաշտոնա-կության պատճառով: Ավելին, եղել են նախատեսված լսումների՝ զգալի ձգձգումներ: Դատարանին հասանելի տեղեկատվության հիման վրա պարզվում է, որ 2005 թվա-կանից մինչև 2008-ը նշանակվել է դատական լսումների միջինը 5 օր մեկ տարվա հա-մար, որից մոտավորապես կեսը հետաձգվել է: Այսպիսով, մի կողմ թողնելով այն հար-ցը, թե արդյոք դիմողի կալանքի հիմքերը շարունակում են լինել «համապատաս-խան» և «բավարար»՝ ամբողջ ժամանակահատվածում Դատարանը գտնում է, որ իշ-խանությունները, ամեն դեպքում, չեն ցուցաբերել «հատուկ ջանասիրություն» վա-րույթներն անցկացնելիս:

52. Հետևաբար, խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

53. Դիմողը պնդել է, որ վարույթի տևողությունը չի համապատասխանել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված «ողջամիտ ժամկետի» պահանջին, որում ասվում է՝

«Յուրաքանչյուր ոք... ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ... որոշելիս, յուրաքանչյուր ոք ունի ... դատարանի կողմից ողջամիտ ժամկետում դատաքննության անցկացման իրավունք ...»:

54. Կառավարությունը վիճարկել է այս փաստարկը:

55. Դատարանը նկատում է, որ կողմերի տեսակետները տարբերվում են: Կառավարությունը գտել է, որ 2003թ. դեկտեմբերի 1-ը՝ այն օրը, երբ դիմողը ձերբակալվել է, պետք է համարվի նրա դեմ ընթացող քրեական վարույթի սկիզբը: Ըստ դիմողի տեսակետի՝ 2001թ. օգոստոսի 17-ն այն ամսաթիվն է, երբ իրեն մեղադրանք էր առաջադրվել, ինչն ունի վճռորոշ նշանակություն:

56. Դատարանը կրկնում է, որ քրեական գործերի ընթացքում 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված «ողջամիտ ժամկետը» սկսում է անձին «մեղադրանք» ներկայացնելու պահից, դա կարող է լինել նախքան գործը դատարան ուղարկելը, ինչպես, օրինակ՝ ձերբակալման օրը կամ սկսած այն օրվանից, երբ անձը

պաշտոնապես ծանուցվում է, որ նա հետապնդվում է դատական կարգով, նախնական քննությունն սկսելու օրը: 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով «մեղադրանքը» կարող է սահմանվել որպես «իրավասու մարմնի կողմից անձին տրված պաշտոնական ծանուցումն, առ այն, որ նա կատարել է քրեական հանցանք» (տե՛ս վերը նշված Իքլի գործը կետ 73 և *Ռեյնհարդը և Սլիման-Քաիդն ընդդեմ Ֆրանսիայի*, 1998թ. մարտի 31, կետ 93, Ձեկույցներ 1998-II):

57. Ներկայիս գործում մարդասպանության վերաբերյալ քրեական վարույթն սկսվել է 1998թ. օգոստոսի 16-ին: Սակայն այդ ժամանակ դիմողը ներգրավված չի եղել վարույթում: Նա առաջին անգամ հարցաքննվել է 1999թ. օգոստոսի 11-ին: Հաշվի առնելով դիմողի կարգավիճակը որպես վկա և հարցաքննության կարճատևությունը և մակերեսային բնույթը՝ Դատարանը չի համարում, որ դիմողն այդ պահին նույնպես ներգրավված է եղել վարույթում: Դատարանը նպատակահարմար է գտնում 2001թ. օգոստոսի 17-ն ընդունել որպես դիմողի դեմ ընթացող քրեական գործի սկիզբը: Այդ օրը ոստիկանության քննիչը մեղադրանք է ներկայացրել դիմողի դեմ, նրան հայտարարել են որպես պատասխանատվությունից խուսափող անձ, և դատարանը նրան հայտնաբերելու դեպքում թույլատրել է նրա ձերբակալումը: Դատարանը գտնում է, որ դիմողը պետք է տեղեկացվեր այն փաստի վերաբերյալ, որ ինքըփնտրվել է իշխանությունների կողմից: Այն հաշվի է առնում Կառավարության փաստարկն առ այն, որ դիմողը գտնվում էր հետախուզման մեջ, և նա ձերբակալվել է միայն մոտ երկու տարի և չորս ամիս անց, և այդ պատճառով ժամանակահատվածը՝ նախքան նրա ձերբակալումը, չի կարող հաշվի առնվել: Դատարանը չի համաձայնում համատեքստում առկա քրեական վարույթն սկսելու ամսաթվի վերաբերյալ սահմանմանը: Այնուամենայնիվ, դիմողի վարքագիծը մի գործոն է, որը պետք է հաշվի առնվի վարույթի երկարաձգման ողջամտությունը գնահատելիս:

Քրեական վարույթն ավարտվել է 2009թ. ապրիլի 22-ին, երբ Գերագույն դատարանը մերժեց դիմողի բողոքը: Վարույթը, այսպիսով, տևել է մոտ յոթ տարի և ութ ամիս՝ իրավասության երեք ատյաններում:

58. Կառավարությունը պնդել է, որ դիմողը կորցրել է զոհի կարգավիճակը Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով, Տարտուի վերաքննիչ դատարանի 2009թ. հունվարի 27-ի վճռից հետո, որով դիմողի պատժաչափը կրճատվել է նրա կալանավորման և դատական վարույթի երկարաձգման պատճառով:

59. Դատարանը, վկայակոչելով վերը նշված իր սահմանված նախադեպային իրավունքն այս հարցի վերաբերյալ (տե՛ս վերը՝ կետ 40), նկատում է, որ վերաքննիչ դատարանն իր վճռով գտնում է, որ սույն քրեական գործի վարույթի երկարատևությունը չի եղել ողջամիտ (տե՛ս վերը՝ կետ 29): Դատարանը գտնում է, որ, այդպիսով, ներպետական դատական մարմինները հստակորեն ընդունում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտումը:

60. Ինչ վերաբերում է ներպետական իշխանությունների կողմից Կոնվենցիայի խախտմանը՝ Դատարանը նշում է, որ դիմողը դատապարտվել է տասներեք և երեք տարի ժամկետով ազատազրկման՝ համապատասխանաբար երկու առանձին հանցանքների համար, որոնց համար նա արդեն դատապարտվել էր Շրջանային դատարանի կողմից: Վերաքննիչ դատարանը կրճատել է վճռի չափը մինչև տասներեք տարի: Վերաքննիչ դատարանը, իր հերթին, նվազեցրել է համապատասխան վճիռները՝ այն դարձնելով ութ և մեկ տարի և սահմանել ութ տարի որպես վերջնական վճիռ: Վարույթի անհիմն երկարաձգումը հիմք է հանդիսացել Վերաքննիչ դատարանի համար նվազեցնել վճռի չափը: Ավելին, Դատարանը նշում է, որ վարույթն ավարտվել է 2009թ. ապրիլի 22-ին, երբ Գերագույն դատարանը մերժել է դիմողի բողոքը: Դա Վերաքննիչ դատարանի վճիռը կայացնելուց մոտ երեք ամիս անց էր, այսպիսով, Դատարանի կարծիքով, հետագա վարույթն այն զգալիորեն չի երկարացրել:

61. Դատարանը բավարարված է նրանով, որ ներպետական դատական իշխանությունները ներկայիս գործում համարժեքորեն հաշվի են առել վարույթի երկարատևությունը և կրճատել դիմողի պատժաչափը: Հետևաբար, Դատարանը գտնում է, որ դիմողն ստացել է համապատասխան փոխհատուցում 6-րդ հոդվածի 1-ին կետի ենթադրյալ խախտման համար:

62. Դատարանը եզրակացնում է, որ դիմողը դադարել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի ենթադրյալ խախտման զոհ լինելուց 34-րդ հոդվածի իմաստով: Հետևաբար, այս գանգատն ակնհայտորեն անհիմն է և պետք է մերժվի Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերին համապատասխան:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

63. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

64. Դիմողը չի ներկայացրել արդարացի բավարարման պահանջ: Ըստ այդմ, Դատարանը գտնում է, որ այս առումով նրան գումար տրամադրելու անհրաժեշտություն չկա:

ՎԵՐՈԳՐՅԱԼԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ

1. Վճռում է, որ վարույթի երկարաձգման գանգատն անընդունելի է և դիմումի մնացած մասն ընդունելի,
2. Վճռում է, որ որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

Կատարվել է անգլերենով և գրավոր հրապարակվել 2010թ. փետրվարի 4-ին՝ Դատարանի կանոնների 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն:

Նախագահողի տեղակալ

Սթեֆեն Ֆիլիպս Պիր Լորենսեն